ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
հեռ. (0264) 2-34-23
gavarmeria@rambler.ru

Ելից N 2P637 «13» 10 2011թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՆՎԵՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պողոսյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30 հոդվածի 8-րդ կետի պահանջով, Ձեզ ենք ներկայացնում Գավառ համայնքի ավագանու N 7 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 2 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

21 10 2011թ
5815-11

Կատ. աշխատակազմի
ղեկավար Կ. Մանուկյան
հեռ. 2-76-69

ՈՐՈՇՈՒՄ

03 հոկտեմբերի 2011 թ. թիվ 42 որոշում

Նիստին մասնակցում էին Գավառ համայնքի ավագանու 15 անդամներից 10-ը՝
Գ. Բաղեյան, Վ. Միրիբյան, Պ. Մարտիրոսյան, Ս. Ամիրխանյան, Ա. Դաղոյան,
Ա. Դվոյան, Կ. Խաչիկյան, Ա.Արզաքանցյան, Խ. Բաղալյան, Ա. Ղազազյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 հոդվածի 1-ին մասի 1) կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի բ) ենթակետի, 33 հոդվածի 4-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ Հայրավանք համայնքի գլխավոր հատակագծի ձեռք բերման համար պայմանագրով հատկացվել է 683.0 հազ. դրամ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2011թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
01 բաժնի 8 խմբի 1 դասի /դրամաշնորհներ ՀՀ այլ համայնքների բյուջեներին/ գործառնական դասակարգման 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1117.0 հազ. դրամով, որից 117.0 հազ. դրամ ավելացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություն/ գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածին՝ որպես անդամավճար ՀԿ-ներին, իսկ 1000.0 հազ. դրամը ավելացնել 09 բաժնի 4 խմբի 1 դասի /բարձրագույն մասնագիտական կրթություն/ գործառնական դասակարգման 4729 /այլ նպաստներ/ տնտեսագիտական հոդվածին:

Գավառ քաղաքային համայնքի
ավագանու անդամներ՝

Ս. Ամիրխանյան
Ա. Դվոյան
Կ. Խաչիկյան
Պ. Մարտիրոսյան
Վ. Միրիբյան
Ա. Դաղոյան
Գ. Բաղեյան
Ա. Արզաքանցյան
Խ. Բաղալյան
Ա. Ղազազյան

ՈՐՈՇՈՒՄ

03 հոկտեմբերի 2011 թ. թիվ 43 որոշում

Նիստին մասնակցում էին Գավառ համայնքի ավագանու 15 անդամներից 10-ը՝
Գ. Բաղեյան, Վ. Միրիբյան, Պ. Մարտիրոսյան, Ս. Ամիրխանյան, Ա. Դաղոյան,
Ա. Դվոյան, Կ. Խաչիկյան, Ա.Արզաքանցյան, Խ. Բաղալյան, Ա. Ղազազյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄԷ

Գավառ համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից.

1. Գավառ համայնքի ավագանին անդրադարձավ 11.08.2011թ. թիվ 5 նիստի 27 որոշման 3 կետին և որոշեց. Գևորգ Միրիբյանին 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 160.0 հազ. դրամ դրամական օգնություն 340.0 հազ. դրամի փոխարեն:
2. 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 1250.0 հազ. դրամ, որից 945.0 հազ. դրամը Գավառ քաղաքային համայնքի փողոցների և շենք շինությունների հասցեավորման համար ցուցանակների ձեռք բերմանը, իսկ 305.0 հազ. դրամը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից Արծվաքար քաղամասում խմելու ջրագիծ կառուցելու նպատակով, որպես ապրանքային ներդրում՝ խողովակների ձեռք բերման համար:
3. 4819 /նվիրատվություն բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ 2011թ. նոյեմբերի 24-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կայանալիք «Հեռուստամարաթոն 2011» -ին՝ ԼՂՀ-ում ջրամատակարարման ծրագրերի իրականացմանն ու Հայաստանի Հանրապետությունում գյուղերի զարգացմանն աջակցելու նպատակով:

Գավառ քաղաքային համայնքի
ավագանու անդամներ՝

Ս. Ամիրխանյան
Ա. Դվոյան
Կ. Խաչիկյան
Պ. Մարտիրոսյան
Վ. Միրիբյան
Ա. Դաղոյան
Գ. Բաղեյան
Ա. Արզաքանցյան
Խ. Բաղալյան
Ա. Ղազազյան